

ОБРАЗОВАНИЕ

Համակցված ուսուցման գործընթացը որպես գործարար անգլերենի իմացության անհի պայման

Թորգոմյան Զրիստինա Մ.

*վ.գ.թ., դասախոս, լեզուների ամբիոն, կառավարման ֆակուլտետ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

<https://orcid.org/0000-0002-4542-8663>

kristitorgomyan@gmail.com

ՀՏԳ՝ 378.147:811.111:004; EDN: IONJTD;

DOI: 10.58587/18292437-2024.2-102

Հանգուցարաներ՝ համակցված ուսուցում, առցանց գործիքներ, կրթական տեխնոլոգիաներ, գործարար անգլերեն, առցանց հարթակներ, թեստավորում

Смешанное обучение как условие улучшения уровня владения деловым английским языком

Торгомян Кристина М.

*к.п.н., преподаватель, кафедра языков, факультет управления,
Армянский государственный экономический университет (Ереван, РА)*

Аннотация. Настоящая статья представляет полученные данные и результаты количественного и качественного исследования применения онлайн технологий и платформ во время смешанных уроков и их влияние на успеваемость студентов при изучении делового английского языка в Армянском государственном экономическом университете.

В результате данного исследования, мы пришли к выводу, что смешанное обучение имеет свои преимущества и недостатки, но доминирующим являются преимущества. Посредством смешанного типа преподавания делового английского языка, преподаватели совершенствуют навыки использования онлайн сайтов, обучающих интернет ресурсов и инструментов, онлайн платформ (особенно www.nearpod.com) для разработки и создания эффективных уроков, продуктивности и результативности работы студентов, подготовки специально составленных уроков, тестов, онлайн игр в виде тестов.

Все онлайн инструменты, ресурсы и платформы, которые представлены в статье, были использованы на постоянной основе во время нашей преподавательской деятельности и оправдали гипотезу, которую мы хотели проверить и доказать. В результате проведенного исследования, посредством применения онлайн платформ и ресурсов и их внедрения в смешанном обучении, посредством проведенных тестов (диагностических, текущих и заключительных), выявили факт, что знания увеличились вдвое у студентов, которые проходили предмет (в нашем случае, деловой английский) в смешанном виде обучения.

Ключевые слова: смешанное обучение, онлайн инструменты, образовательные технологии, деловой английский, онлайн-платформы, тестирование

Blended learning as a means of improvement of Business English proficiency

Torgomyan Kristina M.

*PhD in Pedagogy, Faculty of Management
Lecturer, Chair of Languages, Armenian State University of Economics (Yerevan, RA)*

Abstract. The paper introduces the findings and results of a quantitative and qualitative study of the use of online technologies and platforms during blended learning classes and their impact on students' performance in learning Business English at Armenian State University of Economics.

The current resulted in the fact that we arrived at the conclusion that blended learning has its advantages and disadvantages, but the advantages are prevalent in this case. By the means of blended learning in teaching Business English, lecturers improve their skills in utilizing online websites, online learning resources and tools, online platforms (especially www.nearpod.com) to develop and design effective lessons, to increase student productivity and performance, by developing specially designed lessons, tests, as well as online games in the form of tests.

All online tools, resources and platforms that are investigated and introduced in the paper were used on an ongoing basis during our teaching practices and justified the hypothesis that was aimed to be tested and justified. As a result of the study, through the utilization of online platforms and resources and their implementation in blended learning settings as well as be the means of diagnostic, progress and final tests, we have identified that the knowledge has doubled among students studying the subject (in our case, Business English) in a blended mode of learning.

Keywords: blended learning, online tools, educational technology, Business English, online platforms, testing process

Ներածություն

21-րդ դարը մեդիահոսքերի, նորարար կրթական տեխնոլոգիաների, առցանց գործիքների և նորարարական կրթական հարթակների դարաշրջան է: Բարձրագույն կրթության հարացույցը ուղղված է սովորողների մոտ կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչը սերտորեն առնչվում է կոմունիկացիոն, տեղեկատվական հմտություններին: Հետևաբար բարձրագույն կրթության նպատակն է մրցունակ մասնագետների պատրաստումը, որը ենթադրում է համապատասխան մասնագիտական գիտելիքի ու հմտությունների ձեռքբերում, մեր դեպքում գործարար անգլերենի իմացության բարձրացումը: Հետևաբար, անհրաժեշտ է բացահայտել և կիրառել մի այնպիսի արդյունավետ մեթոդ, որը նվազագույն ժամանակահատվածում կնպաստեր ուսանողների գործարար անգլերենի իմացության աճին:

Ուսումնասիրության առաջադիր խնդիրները՝

1. Կազմել տարբեր բառագիտական, բառակազմական և քերականական վարժությունների մի համակարգ, որը հնարավորություն կտա, կիրառելով առցանց հարթակներ, բարձրացնել օտար լեզվի դասավանդման արդյունավետությունը տնտեսագիտական բուհում,

2. Փորձարկել համակցված եղանակով ուսուցումը ոչ լեզվական բուհում, վերլուծել հավաքագրված արդյունքները և բացահայտել համակցված ուսուցման մեթոդի արդյունավետությունը, համադրել փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները և ուսումնասիրել առցանց հարթակների կիրառության արդյունավետությունը դասերի ընթացքում:

Հետազոտության գիտական նորույթը

- Մշակվել, վերբեռնվել են կրթական պլանով նախատեսված դասեր առցանց հարթակներում և հետագայում կազմակերպվել են համակցված մեթոդով դասեր և հիմնավորվել է վերջինիս արդյունավետությունը:

- Համակցված ուսուցման մեթոդով դասավանդումը տնտեսագիտական բուհում հստակեցրեց այս ուսուցման մեթոդի արդյունավետությունը, հուսալիությունն ու հանգեցրեց գործարար անգլերենի գիտելիքի գրեթե կրկնակի աճին:

Գրականության ակնարկ

Համակցված ուսուցումը սերտորեն կապված է առցանց ուսուցման հետ, որը հատկապես կարևորվեց Covid-19 համավարակի պայմաններում, երբ երկրները խստացրին պայմանները և լոքդաուն հայտարարեցին, ինչը ստիպեց կրթական հաստատություններին անհապաղ անցում կատարել դասավանդման առցանց եղանակին:

Բերենք համակցված ուսուցման մեթոդի առավել հաջողված հստակ սահմանումներից մի քանիսը:

«Համակցված ուսուցումը կրթական մեթոդների համակցություն է» [2]:

«Համակցված ուսուցումը առցանց և լսարանային դասավանդման համակցումն է» [6, էջեր 6-7]:

«Համակցված ուսուցումը» կրթական համակարգ է, որը հիմնված է լսարանային դասավանդման (առդեմ դասավանդման) և համակարգչային միջոցներով դասավանդման համակցմամբ: Այս սահմանումը հայտնվեց 2006 թ. «Համակցված ուսուցման տեղեկատվում» [3, էջեր 8-10]:

Մ. Կունին և նրա համահեղինակները դասի ընթացքում սովորողներին տարբեր տեսակի գործունեության մեջ ընդգրկելու առաջին փորձերն են անում, ինչի արդյունքում դասավանդման այս մեթոդը ստանում է «համակցված ուսուցում» անվանումը: Համակցված ուսուցում իրականացնելու նպատակով նրանք տարրական դպրոցում համակցում են խաղը և աշխատանքը [4, էջեր 165-171]:

Գարրիսոնը և Կանուկան քննարկում են համակցված ուսուցման ներուժը բարձրագույն կրթության ոլորտում՝ ուսումնասիրելով այն խնդիրները, որոնց բախվում են ոլորտի աշխատողները: Նրանք նշում են, որ «համակցված ուսուցումը լսարանային առդեմ և առցանց ուսուցման գործընթացի մանրակրկիտ մտածված ինտեգրումն է» [5, էջեր 95-105]:

Կուրտիս Բոնկը և նրա համահեղինակները փաստում են, որ գոյություն ունի գնալով աճող հետաքրքրություն համակցված ուսուցման նկատմամբ [3, էջեր 8-11]:

Մեկ այլ ուսումնասիրությունում Արաբասը և Բեյքերը պարզում են, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների 80 տոկոսն առաջարկում է համակցված ուսուցման դասընթացներ [1, էջ 2]:

Վերլուծություն

Համավարակի սրընթաց տարածումը ցնցեց աշխարհի կրթական մի շարք հաստատություններ՝ անկախ աշխարհագրական դիրքից կամ այն փաստից, որ դրանցից մի քանիսը առցանց դասընթացներ կիրառում էր դեռևս մինչև համավարակը: Հայաստանի բուհերը ևս փորձեցին դիմակայել այդ մարտահրավերին՝ առդեմ կրթաձևը տեղափոխելով ամբողջովին առցանց հարթակ կամ միջավայր:

Ուսումնասիրելով դասավանդման տարբեր մեթոդները և հիմնվելով համավարակի ընթացքում ձեռք բերված առցանց դասավանդման փորձի վրա՝ եկանք այն եզրակացության, որ ժամանակակից աշխարհում ցանկալի է համակցել դասավանդման տարբեր ձևաչափեր: Առաջ

քաշեցինք մի վարկած՝ կապված «համակցված ուսուցման» ձևաչափի հետ, որը, ըստ մեր նախնական վարկածի, կրարելավեր ուսանողների գործարար անգլերենի իմացությունը և առավել արդյունավետ կլիներ հատկապես տնտեսագիտական բուհում գործարար անգլերենի ուսումնառության ընթացքում: Հետևաբար իրականացրինք փորձարարական դասավանդում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում՝ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությամբ սովորողների շրջանում:

2021/2022 ուստարվա սկզբին մեր կողմից առանձնացված երկու խմբերում անցկացրեցինք ստուգիչ թեստ, որը նախապես կազմվել էր մեր հետազոտության համար՝ ուսանողների շրջանում անգլերենի իմացության նախնական մակարդակը ստուգելու: Նույնը կազմակերպեցինք 2022/2023 ուստարվա ուսանողների շրջանում: Այս անգամ նույնպես ուսանողներին տրամադրվեց նույն (2021-2022 ուստարվա) ստուգիչ թեստը: Թեստի արդյունքները բացահայտեցին ուսանողների գործարար անգլերենի տիրապետման մակարդակը, նախնական գիտելիքը և բացթողումներն ու թերացումները, որոնք անհրաժեշտ էր հասցնել նվազագույնի մեր փորձարարական դասընթացի շրջանակում: Որոշեցինք գնահատումը անել ոչ թե ըստ կատարած սխալների, այլ ճիշտ պատասխանների՝ ստուգելով ուսանողների ընդհանուր և գործարար անգլերենի իմացությունը և բառապաշարային գիտելիքները:

Հետագայում դասերը փորձարարական խմբերում անցկացվեցին համակցված ուսուցման եղանակով, իսկ ստուգողական խմբերում՝ ավանդական եղանակով:

Ընտրվեցին առցանց գործիքներ, որոնց միջոցով անցկացվեցին փորձարարական խմբերում անգլերենի դասերը՝ մեկ կիսամյակի ընթացքում (ինչը ներառում է 6 թեմա գործարար անգլերենի պլանով նախատեսված դասագրքից):

Անդրադառնանք www.nearpod.com վեբկայքին, որը լայն հնարավորություն է ընձեռում առցանց դասերի մշակման և իրականացման համար: Nearpod հարթակը իսկական բացահայտում էր մեզ համար՝ կազմակերպելու գրավիչ և մոտիվացնող դասեր և առաջադրանքներ: Դասախոսը այստեղ ստեղծում է ամբողջական դաս՝ ներառելով 4 լեզվական հմտությունները. առաջադրանքները ներառում են առցանց գրատախտակներ՝ առցանց համագործակցության հնարավորությունով, ունկնդրման համար նախատեսված տեսահոլովակներ՝ տարբեր տեսակի առաջադրանքներով, օրինակ՝ բազմակի ընտրություն, բաց տիպի հարց,


ճիշտ/սխալ պնդումներ, որոնք պարտադրում են լսել ոչ միայն լսելու համար, այլ ունկնդրել՝ տեղեկատվություն ստանալու, վերլուծելու և բովանդակությունը ընկալելու համար:

Ստորև ներկայացնում ենք մեկ առցանց դասի նկարները (E-commerce էլեկտրոնային առևտուր՝ թեմայով):



Նկար 1. Ինտերակտիվ խաղի սկզբնական տեսքը և թեստի հարցերից մեկը

Նկար 1-ը ներկայացնում է ինտերակտիվ խաղի սկիզբը, որին մասնակցում են ուսանողները և փորձում են առավելագույնս արագ պատասխանել, որպեսզի հաղթեն և ստանան շատ միավորներ:



Նկար 2. Տեքստ առցանց առևտրի վերաբերյալ

Նկար 2-ում ներկայացված է տեքստը, որը ուսանողները կարդում են, փորձում հասկանալ՝ առանց դասախոսին բառեր հարցնելու: Դրան հաջորդում է 6 հարցից բաղկացած կարճ թեստը, որը ներկայացնում ենք ստորև (նկար 3)՝ հարցերի քանակն անսահմանափակ է: Այսպիսի հարցեր են ներառված կարճ թեստի մեջ, որին ուսանողները պատասխանում և ստանում են իրենց գնահատականը՝ ըստ ճիշտ պատասխանների տոկոսային արտահայտության:

Question 1 / 6

What is meant by the notion of 'e-commerce'?

A. buying and selling online


B. buying online

C. selling online

Նկար 3. Թեստ՝ ստուգելու տեքստի իմաստի ընկալումը

Տարբեր տեսակի հանձնարարություններ են զետեղվում այս առցանց հարթակում և կիրառվում համակցված դասերի ընթացքում:


Տրամագիր 1-ը ցույց է տալիս 2021/2022 և 2022/2023 ուստարիների փորձարարական խմբերում առցանց առաջադրանքների կատարման միջինացված արդյունքները:



Տրամագիր 1. Nearpod.com առցանց հարթակում զետեղված առաջադրանքների արդյունքները

Փորձարարական խմբերի մոտ ստուգիչ և ամփոփիչ թեստերի միջև գրանցվում է հետևյալ առաջընթաց. 2021/2022 ուստարվա խմբի մոտ՝

47.7% և 2022/2023 ուստարվա խմբի մոտ՝ 37.04%:



Տրամագիր 2. Փորձարարական խմբի և ստուգողական խմբի թեստավորման արդյունքներ (Ստուգիչ թեստ, ընթացիկ թեստեր և ամփոփիչ թեստ)

Մեր կողմից առցանց հարթակներում մշակված դասերի միջոցով իրականացված համակցված ուսուցումն առդեմ դասերի ընթացքում, ինչպես նաև կատարած ինքնուրույն աշխատանքը և հանձնարարություններն էականորեն նպաստեցին փորձարարական խմբերի անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանը, ինչի մասին վկայում են տրամագիր 2-ում ներկայացված արդյունքները:

Եզրակացություններ և առաջարկություններ

1. www.nearpod.com առցանց հարթակում մեր կողմից հեղինակած տեսուերը, վարժությունները, առաջադրանքները, ունկնդրման հանձնարարությունները, մոդելավորող խաղերը գրեթե կրկնակի անգամ բարձրացրին փորձարարական խմբերի ուսանողների գիտելիքի մակարդակը, ինչը հաստատվեց ամփոփիչ թեստավորման արդյունքներով:

2. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները առցանց և առդեմ դասավանդման ընթացքում, անկախ այն փաստից, որ դասավանդողները շատ ժամանակ են հատկացնում առցանց դասեր և ռեսուրսներ կազմելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Arabasz, P., & Baker, M. B.** Evolving campus support models for e-learning courses, 2003. Educause Center for Applied Research Bulletin Online: Retrieved 17.01.2023 from <https://1library.net/document/zpn3g5vv-evolving-campus-support-models-for-e-learning-courses.html>
2. Bersin&Associates Blended learning: What works? An industry study of the Strategy, Implementation, and Impact of Blended Learning, Bersin & Associates, 2003. Retrieved on January 26, 2023 from <https://scirp.org/reference/referencespapers.aspx?referenceid=2143720>
3. **Bonk C. J., Graham, C. R.** Handbook of blended learning: Global Perspectives, local designs — San Francisco, CA: Pfeiffer Publishing, 2006 (624 էջ).
4. **Cooney, M.H., Gupton, P., & O’Laughlin, M.** Blurring the lines of play and work to create blended classroom learning experiences, Early Childhood Education Journal, 27(3), 2000.
5. **Garrison, R., & Kanuka, H.** Blended learning: Uncovering its transformative potential in higher education, The Internet and Higher Education, 7, 2004 <https://doi.org/10.1016/j.iheduc.2004.02.001>.
6. **Reay J.** Blended learning — a fusion for the future [Journal] // Knowledge Management Review 4(3), 2001.

Տճանա/Հանձնվել է՝ 01.04.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 08.04.2024

Принята/Ընդունվել է՝ 11.04.2024